12.02.24 - 12.02.24
16:30
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ թանգարան

Ս.թ. փետրվարի 12-ին՝ ժամը 16:30-ին, ԵՊՀ պատմության թանգարանում կանցկացվի Գիտության ոլորտում կանանց և աղջիկների միջազգային օրվան նվիրված միջոցառում։

Միջոցառման շրջանակում կքննարկվեն հետևյալ հարցերը՝

- ինչո՞ւ է գիտությամբ զբաղվող կանանց թիվը նկատելիորեն զիջում տղամարդկանց թվին,
- ինչպիսի՞ն է Հայաստանում կանանց ներգրավվածությունը գիտության տարբեր ճյուղերում,
- արդյո՞ք գիտությամբ զբաղվող կանայք բախվում են աշխատանքի հետ կապված խոչընդոտների,
- ինչպե՞ս են գործընկերները, ընտանիքը և հասարակությունն առհասարակ ընկալում կին գիտնականներին։

Հիմնական բանախոսներն են՝

- Սուսաննա Գագինյան՝ ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի միջուկային ֆիզիկայի ամբիոնի դասախոս, Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոնի գիտաշխատող,
- Սոնա Մանուսյան՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ հոգեբանության ֆակուլտետ, Անձի հոգեբանության ամբիոն,
- Յուլիա Անտոնյան՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Մշակութաբանության ամբիոն,
- Նվարդ Մանասյան՝ կրթության և գենդերային հարցերի փորձագետ,
- Աննա Փոլադյան՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, Կենսաբանության ֆակուլտետ։

Քննարկումը կվարի ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի տնօրեն Լուսինե Խառատյանը։

Միջոցառումը կազմակերպվում է ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի «*Ազատ ունկնդիր» բաց համալսարան* նախաձեռնության շրջանակում: Այն դասախոսների, ուսանողների, ինչպես նաև շրջանավարտների համար հնարավորություն է՝ մասնակցելու տարաբնույթ միջոցառումների, որոնք կազմակերպվելու են յուրաքանչյուր ամիս:

Միջոցառմանը գրանցվելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝ https://forms.gle/7ZtiWmqzWxQ4ESfa6

Միջոցառման մանրամասները՝ այստեղ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am